

Սիրելի Ծխականներ,

Ուրախ եմ յայտնելու թէ Աստուծոյ ողորմութեամբ  
եւ Ս Յարութիւն եկեղեցիի ժրջան անդամներուն նիւթական  
եւ բարոյական զոհողութեան շնորհիւ բոլորած ենք յաջող  
տարի մը: Մեր մէկ տարուան գործունէութեան ամփոփ տեղեկա-  
գիրը հետեւեալն է:-

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՊԱՇՏԱՄՈՒՆՔ

Կիրակնօրեայ պաշտամունքները կեդրոնը կը կազմեն  
մեր կրօնական կեանքին: Իւրաքանչիւր կիրակի եւ տօնական  
օրերուն ունեցած ենք եկեղեցական պաշտամունք, մատուցած  
Ս Պատարագ եւ խօսած աւուր պատշաճի քարոզ, հայերէն եւ  
անգլերէն, ի միութարութիւն մեր հաւատացեալ ժողովուրդին:

Մեր լաւ կազմակերպուած/եւ նուիրուած Դպրաց Դասի  
անդամ ու անդամուհիներուն, երգեհոնահարին եւ սարկաւազնե-  
րուն երգակցութեամբ եկեղեցական արարողութիւնները կատարուած  
են վայելուջ կերպով: Ձեր եւ իմ անունովս կը շնորհակտենք  
մեր սիրուած Դպրապետը, երգեհոնահարը, սարկաւազները եւ Դպրաց  
դասի իւրաքանչիւր անդամը եւ իրենց կը մաղթենք առողջութիւն  
եւ երկար կեանք:

Եկեղեցական պաշտամունքներէ եւ խորհրդակատարու-  
թիւններէ զատ նաեւ զբաղած ենք մեր պաշտօնին յատուկ գործե-

այցելած ենք մեր ծուխի հիւանդներուն եւ սգաւորներուն առ ի մխիթարութիւն: Վերոյիշեալներու կարգին հսկած ենք Կիրակնօրեայ Վարժարանի եւ Հայ Դպրոցի: Երբ եկեղեցւոյ զանազան կազմակերպութիւնները ժողով գումարած են անձամբ ներկայ եղած եւ նախագահած ենք այդ ժողովներուն եւ տուած հարկ եղած ուղղութիւնը: Ծնունդին, Զատկին եւ Մեռելոցին կատարած ենք տնօրհնէք եւ գերեզմանօրհնէք: Մեր յարաբե-  
 րութիւնները Պատուարժան Ծխական Խորհուրդին եւ եկեղեցւոյ յարակից կազմակերպութիւններուն հետ եղած է հաշտ ու ներ-  
 դաշնակ:

ԽՈՐՀՐԴԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆՔ

Անցեալ տարուան ընթացքին ունեցած ենք 2 մկրտութիւն,  
 2 պսակ եւ 6 թաղում: Ապրիլ 3օ ին եւ Մայիս 1 ին մասնակ-  
 ցած ենք Հոգեւորականաց Համագումարին, իսկ Մայիս 2 -3 ին  
 ծուխիս 2 երեսփոխաններուն հետ մասնակցած Թեմական Պատգամաւոր  
 ական ժողովին որ գումարուեցաւ ութըրթաունի Ս Յակոբ Եկե-  
 ղեցւոյ մէջ:

Հոկտեմբեր 18 ին Հայ եւ Ամերիկացի Վեթերաններու կողմէ  
 ի պատիւ Հէրրի Մեծատուրեանին տրուած ճաշկերոյթին ներկայ  
 եղանք եւ սեղանը օրհնեցինք:

Այսու հրապարակաւ մեր գնահատանքը կը յայտնենք Ծխական  
 Խորհուրդին, Տիկնանց Միութեան, Դպրաց Դասին, Հայաստանեայց  
 Եկեղեցւոյ Երիտասարդաց Կազմակերպութեան եւ Ամուսնացեալ

Գնահատանքի խօսք ունինք նաև համայնքիս երկու երես֊  
փոխաններուն, որոնք լաւագոյն կերպով ներկայացուցած են մեր  
ծուխը Թեմական Պատգամաւորական ժողովներուն:

Մնորհակալութիւն նաև Զեր բոլորին, որ ներկայ եղաք  
այս ժողովին եւ Զեր օգտակար թելադրութիւններով սատարեցիք  
մեզի:

Տէրը  օրհնէ զմեզ եւ պարգեւէ երկնային իմաստու֊  
թիւն եք կարենանք նուիրումով ծառայել մեր ժողովուրդին  
ու եկեղեցիին, ի փառս Աստուծոյ:

Հարգանքով Սեպեմբեր  
Լավի

Յուլի 25, 1970

Է. Գրոսս